

ՆՈՐ-ՕՐ

Լ. Ր. Ա. Գ. Ի. Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ"Ի

ՆԱԽԱԿ ԿԱՐ ՈՍԷԷ ԲՊԹԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ Է ՈՒՂՂԱԿ ԵՐ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԼՍԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռագրիներն են չեն գործարար

ԱՐՏՕՆԱՏԵՐ Յ. ՄԻՆԻՍԷ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ		ՊՐԵ. ՈՂՋ
Գանձի համար	Տարեկան	30
"	Վեցամսեայ	20
Շրջակայից	Տարեկան	60
"	Վեցամսեայ	35
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԶԱՄԱՐ		
Տարեկան	Ֆրանկ	18
Վեցամսեայ	"	10
ՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՂՄՈՒ ԶԱՄԱՐ		
Տարեկան	Բուրժի	7
Վեցամսեայ	"	4
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆՈՒԿ Է ԵՒ ԲՊԹԱՍԱՐԻ ՇԱՒԻՐԸ Թերթին վարչութեան վրայ է		

ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼ 28/ՄԱՅԻՍ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 88

ՄԵԾ ՅՈՐԵԼԵԱՆ ՄԸ

Վենետիկի Միտիթարեաններուն է այն որ պիտի տօնուի յառաջիկայ Սեպտեմբեր 8ին, Սուրբ Ղազարու վանքին մէջ:

Իրի երկցագոյնը եզրիպատի Հայ օրագրողներուն, պարտադանցութիւն մը պիտի ըլլար իմ կողմէս եթէ տեղւոյս Հայ դպրութիւն չի յիշեցնէի այդ փառաւոր թուականը և անոր վրայ չ'հրահրէի ամենուն ուշադրութիւնը:

Աւելորդ չ'պիտի ըլլար արդեօք մի առ մի թուել հոս, այն ամեն ծառայութիւնները որ ազգին մատուցած է այդ միաբանութիւնը որուն հիմը դրած է սակից երկու հարիւր տարի առաջ, պարզ գաւառացի մը որ ըստ իս մեծագոյնն է Հայ բարեբարներուն:

Առանց Ս. Ղազարու վանքին ես չեմ հաւատար թէ Հայ մատենագրութիւնը ունենար այն փայլը որ ունի այս օր:

Առանց այդ հոյակապ հաստատութեան կը կարծէ՞ք թէ պիտի կրնայինք ունենալ Բագրատունի մը, Հիւրմիւզներ, Ազգերեան մը, Զարփհանեկեան մը, Զամիչեան մը, Ալիշան մը և ուրիշ շատեր, որոնք, կերպով մը, հիմնեցին մեր ժամանակակից գրականութիւնը որ եւրոպականներուն հետ համեմատեալ քաշելու սահմանուած է չնորհիւ այն բազմաշխատ գործերուն որ վերայիչեալ սաղանգները արտադրեցին:

Միտիթարեաններուն գրչական և կրթական գործունէութիւնը այնքան ծանօթ է այնքան վեր է ամեն քննադատութենէ որ ինծի պէս խեղճ գրող մը, իր այս ճղճիմ տողերով ոչինչ կրնայ աւելցնել անոնց համբաւին վերայ, բան մը որուն պէտք չունին արդէն:

Երկու հարիւր տարիներէ 'ի վեր գոյութիւն ունեցող և օրէ օր ընդարձակուելու և բարգաւաճելու սահմանուած աշխարհաճանաչութեան հաստատութիւն մը ո՛չ ո՛հքլամի պէտք ունի և ո՛չ ալ յանձնարարութեան:

Յօրեկանը՝ որ ըսնի մը ամեն պիտի տօնուի այդ պղտիկ կղզեակին մէջ, որ սակայն մեծագոյնն է մեր լոյսի կեդրոններուն, երախտագիտական մեծ ցոյցի մը արտայայտութիւնը կը նկատեմ ես, փառաւորից համար յիշատակը Միտիթարեան, որ Սահակ-Միտիթարեան յետոյ, առաջին տեղը կը զբաւէ Հայ դպրութեան պատմութեան մէջ:

Ս. Ղազարու վանքի Հայ, չպիտի կրնայ, կարծեմ, անտարբեր մնալ այդ մատուցած թուականին հանդէպ և պիտի փութայ, անտարակոյս ինքնաբերաբար մասնակցել այդ հանդէպին որ արդէն, աշտոցաւ բան մը ունի իր մէջ, որովհետեւ այդ ամառ խմբութեան առթիւ կարիւր և օգտաշատ հրատարակութիւններ լոյս պիտի տեսնեն:

Պատկառելին Ալիշան, մեր ամենուս սիրելի վարպետը, Հայութեան պարծանք եղող այդ անդուզական պատմաբան-գրողէտը, իր պարզունակ ոճով բայց հոգեհոյզ հրահրող պարտականութիւն կը գնէ ամեն Հայու վրայ, միանալ իրին հետ փառաբանելու համար Միտիթարի յիշատակը որ հաւատարմաբար նուիրական է ամեն ճշմարիտ Հայու համար:

Եզրիպատեան Հայերը պիտի զղածուին, բնականաբար, ալեղարդ նահապետին այդ հրահրին և պիտի փութան ստորակոյս չկայ, իրենց գրական աջակցութիւնը բերել, իրենք ալ իրենց մասը ունենալու համար այդ ազգային-գրական տօնախմբութեան մէջ:

Ահա ասոնց դիւրութիւն մը ընծա յիշու նպատակաւ է որ Եզրիպատեան հանրային կրթութեան նախարարութեան վարչութեան ճիշտ Բիւզանդ Մասարաֆ կազմած են մասնախումբ մը որ արդէն ձեռնարկած է հանդանակել այն ամեն նուիրատուութիւնները որ կրթասէր և սովորաբար Հայեր պիտի յանձնեն իրենց:

Երջանիկ պիտի համարէի ես զիս, եթէ այս պարզ տողերով կրցայ օգտակար ըլլալ, այն ամեն հայերու որոնք իրենց կարողութեան չափով, մասնակցել կուզէին երախտագիտական այդ ցոյցին, կարելի եղածին չափ փայլուն և փառաւոր ընելու համար. Վենետիկի մէջ սարքուած և Սեպտեմբեր 8ին տրուելիք Միտիթարեանց երկ-հարիւրամեայ յօրեկանը որուն յաջողութիւնը մեր ամենուս փափաքը պէտք է ըլլայ:

Յ. ԱՎԻՍԷ



ՓՈԹՈՐԿԵԱԼ ՆԱԻՐ

ՓՈԹՈՐԿԵԱԼ ՆԱԻՐ

Կեանքերնիս՝ ծով ալեկոյ՛,
Ու սրտերնիս՝ խորունկ խոց,
Մենք, Հայ սրբեր անպաշտպան,
Կարօտ ենք ձեր օգնութեան,
Հայեր տարաբնակ,
Յիշեցի՛ք մեզ, մի՛ մոռնար:

Ահա այս է նշանաբանը Գահիրէի Հայոց Որբասիրաց ընկերութեան ընդհանուր կանոնագրին որոյ առթիւ «Նոր-Կեանք»-ի վերջին թիւին մէջ հաճաքով կարդացինք հետեւեալ զբրութիւնը զոր նայնութեամբ կարտատպենք հոս սեղ, առանց մեր կողմանէ բառ մը լոկ աւելցնելու հարկը տեսնելու Գահիրէի Հայոց Որբասիրաց ընկերութեան գործունէութիւնը ամենուն ծանօթ ըլլալով: Կարտատանք միտոյն հանդէպ խրատախոյսի սրտազրուտ արձագանքին որ հետեւէ կուգայ: Եթէ փարսաւորներուն երկիրը յետադէմ է մնացած կրթական տեսակետով, չունի ոչ համալսարան, ոչ գլխաւ մը և ոչ ալ արժանաւժայել կրթական հաստատութիւն մը, չէ՛ միթէ կարող պարծենալ իր Որբասիրաց Ընկերութիւններով, որոնք իսկապէս շատ չին ինչոյր բնաւ որբացած խեղճ Հայերնիքի ցաւերը ամբարկու, արցունքը սրբելու:

Գահիրէ 1899 մայիս 4ին հիմնուեցաւ Որբասիրաց Ընկերութիւն մը, որուն կանոնագիրը Եզրիպատեան Ազգային Իշխանութիւնը այս տարի յունուար 1ին վաւերացուց:

Այդ Ընկերութեան նպատակն է՝ Արաբ կիրեն ու շրջականերն մտնել և ազնիւ որբեր խնամել, առանց դաւանանքի խտրութեան: Որբերը հինգ տարի Արաբիկի կամ յարմարագոյն ուրիշ վայրի մը Որբանոցին մէջ պիտի կրթուին: Հնգամեայ առաջին շրջանի մը բոլորումն յետոյ, կեդրոնական Արամեան Որբանոց մը պիտի հաստատուի Գահիրէ, եթէ սաւառ զանի տարեկան ծախսերը հոգալու բաւականաչափ հասոցներով պահեստի գումար մը արդէն հայեցաթուած է: Հակառակ պարագային, երկրորդ շրջան մը պիտի նիսի նախարարին համանաման գործունէութեամբ:

Տպագրեալ կանոնագիրը իր ձևի տեսք կը կրէ, իբր նշանաբան, պատկեր մը ալեկոյտեալ ծովին սրուն վրայ Հայ սրբուկներով լեցուն փաթորիկալ նաւակ մը, ընկալմալ վրայ. ու վտանգեալները կ'ազգապիտին վերջնալ բաւերով:

Այդ պատկերը մերոյ Հայութեան կեանքն է. զարե՛ք ի վեր մեր սպրած կեանքը. ու զիս անպոք չենք խորատուգոտած, ու պիտի չնորատուգուինք ալ: Ազգային նաւերնիս ովկիանոսին վրայ փորել տրված ենք: Գրեթէ միշտ փոթորիկ կը բռնուինք, առաջատու մը կը պատուի՝ բայց կարկանդակ պատրաստ ճէ, փայտ մը կը կոտրի՝ տեղը շուտով կը գննէք, կ'ալեկոյտը զի կը ամսին՝ երկրորդ մը ձեռքերնուս տակն է. կը ծովնը ու կը ծովնը, մինչև փրկութեան նաւ անպիտող ժամանումնիս:

Առաջատունու մը շիփ շիտակ գնաւ ազդի մը չէ որ կ'ընթանայ, նման շոգեկառնի: Նաւապետ, նաւագ, զեկալար ամենքն ալ պէտք է ջուրերը ճանչնան, թըշնամի հոգեկրուն վե՛րապատասխանները գործածելու արհեստին բաժանակալ ըլլան, և հոգեկան գործութեամբ արիւցեալ մարտնոք

պէտք է գիշեր ցերեկ հասարակաց մարտի ար-
թուն հանին, և անխնայ աշխատութեամբ
արհիւն սրբակ գինաւը հարմարեցնել հոգեւոր-
բնէ ճարտարած շարժակէ յաստջանայ:

Այս եղանակը հայտնական կեանքը, ու այս
է պէտք է հարմարեցնել նաեւ վաստակաւոր
ծովուն վրայ, ամէնք ալ նախնի փրկութեանը
աշխատելով:

Իր բաւականը մէջ կը թուանք անդին
մեր աշխարհը, ուր սակայն կեանքը սրտե-
բու և մարտն ու մէջ կը պահպանուի, սպին
օտար երկրները օրէ օր աւելի ետանգազին,
աւելի յարածուն գործունէութիւն մը կ'աւ-
րացնեն: Եւ Հայրենիքն է որ իր կեդրոնա-
ձիգ գործիքն իրեն կը բաշխէ սարգիւր գա-
ւակներէն մտածութիւնն ու հոգածութիւնը:

Գահիրէի Որբաւորաց Բնակարանները սր
յանձնարարելի վարիչներով կը ներկայանայ
հայ ժողովուրդին առջև, ինքն ալ մեր յա-
ւաստութիւնը գործողը նոր վերջնական
մը կը բերէ: Ահա մարմին մըն ալ որուն
ստաջարած նպատակը աշխարհութիւն մըն
է հայ ժողովուրդին անջնջմանը ստա-
բուլ ունենան, ու պէտք չենք տեսնել շատ
ժամանակ անոր բարեբար ազդեցութեանը
վրայ: Բայց որիչ գիտագիտութիւն մը կը ներ-
կայացնենք:

Կանոնագրին Յրդ. յօդոսածը կ'ըսէ.
«Վերականգնել կեդրոնը և Գահիրէ, ու-
րուն կը պատկանին նոյն նպատակաւ բա-
զարէն շրջակայքը կազմուած ու կազմուելիք
բոլոր մասնաձիգերը»:

Այդ կազմակերպութիւնը ինքնին ծառա-
յութիւն մըն է ազգային գաղափարին հը-
գորացման այն Հայաց մէջ զոր բազմը ցե-
րուցան տարած է Արիւնի: Ետանգազին բու-
րութեամբ գաղափարի մը շուրջ, ու անոր
իբրևանայանք աշխատելով ամէն օր սրտեր-
նին պահ մը գեղեցիկ բացակայ հայրենիքը
թաղելու կը զրկի: Օտարութեան մէջ անմեծ
պահներ հայ ոգին, մինչև Օրը հասնի: Որ-
բաւորաց Բնակարանները եթէ ուղղակի Հայ-
աստանի ազգայն սերունդը կը պատրաստե-
անուզակի՝ պատրաստ կը պահէ սրբի սե-
րունդը երկրպագի մէջ:

ԼՈՐՏ ԳՐՈՒՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՎՐԱՅ

Այն օրէն ի վեր որ Եգիպտոս յանձ-
նուեցաւ Անգլիացի վարիչներու ձեռքը, երկ-
րին գանազան ճիւղերուն մէջ յատուցակի-
մութեան հոգեւ ջրղիթ անուեցան:

Արգարէ Անգլիական գրաւուակն առաջ
որ կ'ըստին 1882 թուականին, սեղական
կատարութիւնը երկրին գանձը հարտա-
ցնելու համար արիւշ միջոց չէր գտած բայց
եթէ հպատակ ժողովուրդը ճնշել ծանր տար-
բերու, անկարգանքաւ (չօսով) բեռնի ներքեւ:

Այս վատ և աւերիչ գրութիւնը մեկ օրէն
մի սր բարեկարգութեամբ կարծու էր: Եթէ անգլի-
ական վարչութիւնը չի գար ձեռք չի գնել
եթիկին գործերուն վրայ, տեղական կառու-
վարութեան քննակցած այդ վատ գրու-
թիւնը օրին մէկը անգլոպր պիտի առաջ-
նորդը բովանդակ երկիրը: Անգլիական
վարչութիւնը ամեն բան առաջ ջնջել ան-
կարգան, թեթեւաց ֆելլաշին բնու, առաւ
անոր ազատութիւն հերիկու և գործելու,
կատի ունենալով որ երկրի մը կը մտտակա-
նծաղկաւոր կատեայ է իր ժողովրդին անգոր-
թութիւնն:

Ինչպէս համար թուրքիոյ կը մտաւ
գանձը միշտ թափա ր է ու ազգատու ին-
չու համար թուրքիան պաշտանեաներուն

սմանակար հագարու մէկ սանջաններով
իսկ չի կրնար վճարել, մինչդեռ Եգիպտոս
ամեն ամսոյ 29ին կը վճարէ իր բոլոր նա-
խարանները և պաշտօնեաները: Որովհետեւ
ժողովուրդը հոն այնքան ճգնուած է բնու,
սուրբի սակ, հարտահարութիւնը այնքան
ընդհանրացած է, կատարական գեղեցի-
նեքը այնքան չափազանցուած են, սր
ժողովուրդը չը գիտեր ինչ ընելը ոչ ալ կա-
ռավարութիւնը:

1887—1900 տարեան երկր տարուան մա-
մանակամիջոցին Եգիպտական կառավարու-
թիւնը 10ր միլիոն ոսկոյ յաւելուած մը ու-
նեցաւ պետութիւն, այնքան տուրքերը և բեռները
վերցնելուն վերջը, ու այնքան ալ արտաբեր-
կարի ծախքերու ենթարկուելով մէկտեղ:
Մինչդեռ 1887ին առաջ՝ սր գետ Անգլիա-
կան վարչութիւնը ձեռք առած չէր հիմակ-
ուան պէս գործերը, գրեթէ գանձը բացալ
չէր թողուր նէ, հագիւ հագ ծախքը կը գո-
ցեր: Աւելի հետոն խտիվ խամայիլ օրով
ինչպէս գիտենք գանձը անուղիվ լայն մ'ալ
ձգեց 100 միլիոն ոսկոյ սանձհինգ տար-
ուան միջոցին:

Որոչ գաղափար մը կազմուելու հա-
մար բաւական է կարգաւ 10րդ Գրոսը-
րի 1900 տարուայ տեղեկագիրը սրկէ
ինչ ինչ կարեւոր հատուածներ ամփո-
փելով ստորե կը հրատարակենք:

ԵՆԵՄՈՒՏԻ

10րդ Գրոսը կ'ըսէ.
«Հակառակ 1899 տարուայ մէջ պատա-
հած Նեղոսի ջրերի նուազութեան, Եգիպ-
տական կառավարութեան 1900 տարուայ
հասոյթը 11,663,000 ոսկոյ հասած է,
ատկէ եթէ զիջենք նոյն տարուայ սովորա-
կան ծախքը 11,104,000 ոսկոյ. յաւել-
ուած մընալ գոյացած կըլլայ կը 559,000
ոսկոյ՝ պետական մէջ»:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԱՐՏԻ

1899 զեկտեմբեր 3ին Եգիպտական
պարտքը կը հաշուուր 102,714,000
Եգիպտական ոսկոյ:

ՓՈՍՏԱՅԻ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՏՈՒԿ- ՆԵՐԸ

Եգիպտոսի ժողովրդին հարստանալու
միջոցներուն վրայ խորհելու ժամանակն է:
Հատարակ ժողովուրդը զրամը կը շահի,
շահած զրամը պէտք է սր արդիւնաւոր:

Այս նպատակը զրոյցած՝ ներկայ տար-
ուայ սկիզբը խտիվական հրովարտակի մը
համաձայն Գահիրէի, Ալեքսանդրիոյ,
Մանսուրայի վերջնական Եգիպտոսի գլխա-
ւոր բաշարներուն մէջ հաստատուեցան խը-
նայողական սնտուկներ, իւրաքանչիւր թըր-
թատան մէջ:

Խնայողական սնտուկը 5 գահեկանն
սկսեալ մինչև 200 ոսկոյ կը կրնուի, տարե-
կան 2ու կէս սոկոս տալով:

Հնդկաստանի մէջ 1882ին առաջ մէկ
երկու բաշարներու մէջ միայն բացուած
էին այսպիսի սնտուկներ:

Ժողովուրդը կամաց կամաց վարժուեցաւ
ու այնքան համակրեցաւ զէպի այդ հաս-
տատութիւնը, որ քիչ տաննէ ամենայնակ
զիջերու մէջ իսկ բացուեցան այս խնայ-
ողական սնտուկներ:

ՀԱՇՅԾ

Ով չըզիտեր թէ Եգիպտոսի ֆելլաշին
բարոյական և մտաւորական անկման աղէտն
կազմ է Հայրը:

Հայրը ինչպէս ծանօթ է մեզ, օտար
երկրներէն կուգայ նամանաւանդ Յունաս-
տանէն կը ներմուծուի Եգիպտոս: Եգիպ-
տոսի մէջ խտիվ արդիւնաւ և հայրը հանկը:

Հակառակ այնքան խիստ հսկողութեան
զարձեալ գաղանի կը մտցուի ներս հայրը,
ու ֆելլաշը անխնայ կը գործածէ գայն.
բայց և այնպէս տարու տարի տարբերու-
թիւն կը տեսնուի:

Այս տարի գոնիւրգանսի վարչութիւնը
13,333 քիլո հաշի բռնած էր, ստիկանու-
թիւնը 1333 քիլո, իսկ մարային վարչու-
թիւնը 304 քիլո ընդ ամենը 13625 քիլո,
անցեալ տարուան 6477 ին գէմ:

Տր. Ռ. Կոնոսի՝ մտաւորական տեսլ վա-
րակաշներու մասին մտաւոցած տեղեկագրին
համեմատ՝ 1899ին Ապրիլի յիմարտեցը
մտած էին 454 հոգի սրտնցմ 21ը հաշիլէն
խենդեցած էին. իսկ 1900ին մտած էին 506
հոգի սրտ 21 նմանապէս հաշիլէն խենդեցած:

Հայրը զրուսուր գիւրացիներու համար ու-
տիկանութեան իշխանութիւնը աւելի ընդար-
ձակեցաւ: Ով որ հայրի խտիվ բռնուց պի-
տի կընայ 7ը օր բանտարկութեան և մէկ ոսկի
տուգանաց պատարարու կը: Ասոնց խա-
նութեան ալ կը փակուի:

1899ին 902 հոգի իսկ 1900ին 961 հոգի
գաղափարաւեցան հայրի ծախելու ամբա-
տանութեամբ:

1899ին 902 հայրի խտիվ փակուե-
ցան իսկ 1900ին փակուեցան 971: Ու-
տիկանութիւնը բաշարեալու իրեն արտած
թղթաւութիւնը կըցաւ աւելի համարձակու-
թեամբ խուզարկել ու ձերբակալել:

Պէտք չէ յուսու թէ հայրի գործածութե-
նէն ֆելլաշ ժողովուրդը վազ կանցնի: Բայց
և այնպէս ձեռք առնուած միջոցները գոնէ կը
նպատան այդ արտին չի ծաւալուին:

(Շարունակելի է)

Կ. ՊՈՒՍՈՑ ԳԱՆՁԸ

Անգլիացի անձնատուրութիւն մը, կը
գրէ Պ. Մինտա Չերալ «Անուէնի» ի
մէջ, երկու տարի առաջ չնորհիւ կայ-
սերական իրատէի մը յաջողած էր
այցելել թոփ-Գափուի Գանձը, ուր
պահուած են ինչպէս գիտէք արքու-
նական թանկագին հնութիւններ:

Այդ հնութեան պատշաճ նայն
իսկ ես ալ ըրած եմ, կը յարէ Պ. Մի-
նտա Չերալ, 1883 մայիս 8ին, ծպո-
նալ կերպարանքով, իբրև Երուսաղեմի
ձեանաւոր:

Ահաւասիկ այդ մասին իմ ծանօ-
թութիւններս զօր ժամանակը այսօր
աւերի կընծայէ ինձ ազգագրութեան
յանձնելու ի ստորե:

Ով կուզէ ըլլայ, Սուլթանն հրաման
ստանալու է կարենալ այցելելու համար Կ-
Պարսոյ գանձը:

Սուլթանը վերութեամբ հրաման չի տար
որ աս ան երթայ այցելել իր Գանձը:
Բայց և այնպէս բազմամարտ սեղանի-
րուն որ գրեթէ զրկուած են այդ չնորհն,
տեսակ մը առանձնաշնորհում կը վայելեն
Կ. Պարսոյ այցելող օտարագրի բարձրաստի-
ճան զրոտաշրջիկները:

Պէտք եղած արտօնութիւնը ստանալու
համար, զիմեցի Երուսաղեմի արքայութիւն մը՝
որ կայսերական պալատի արտոգրագեան և
առաջին թարգման Մինտի պէյի հետ (Վեր-
ջերս փաշա էր ու մտաւ) մտերմական
սերս յարաբերութիւն ունէր:

Տիպարմար ինձ համար բարեխօսեց
«Իբրև բարձրաստիճան երուսաղեմի մը որ կը
փափաքէ իր կոշիկ հետ այցելել Տարմա-

Պահձի և Պէլլը-Պէլլի պալատները»:
Մինտի Պէլլ իրատէն ստացաւ: Այ ինձ հա-
մար որիչ բան չէր մտար բայց եթէ Ե-
րուսաղեմի ձեռնալ, սրուն համար պէտք էի
նետի կարմիր գտակը և կրիլ Երուսաղեմի
բեղայրը: Մտնալ պէտք էի թուրքերէնը,
ու խտիվ Ֆրանսերէն և կամ Անգլիերէն
ընդաւ, իմ ընկերուհիին հետ՝ Հայ տի-
կին մը հոր հարախրած էի գալ օգտուելու
հագուապիւս առիթն:

Բերաւն լանսո մը նստանք, անցանք
կալթայի կամուրջն, ու հասանք թոփ-
Գարու Սարային, սր կառուցած է Ֆաթիհ
Մուհամմա: Թոփ-Գարու Սարային լայն-
ընէ՛ն՝ զարգարու գոս մընէ յոյգիական
կալթայիցով: Ազգար գարուստ անուամբ
ժանօթ:

Այդ անկուրեկն ներս կը մտնուր ու
պարտեղին մէջն անցնելով կը հասնինք
գանձին գաւթ, Օրթա-Գարուստ անուամբ
ժանօթ:

Գրան ալ և ձախ կողմը յիտանի չափ
կալթայիներ կայնած զիշեր ցերեկ կը
հսկեն:

Երուսաղեմի գրութեամբ խորհել վերջը
այդ պահպանները, սրաց զմէք պատկա-
ռանք կը ներշնչէ, կը մտնենք ներս արիւշ
գոնէ մը սր կը բացուի մեզ համար յատ-
կապէս: Այդ միջոցին պեղ կ'առաջնոր-
դը երկտասարկ կատակացի մը Ֆուսա պէյ
կայսերական թիկնապահ, զոր մեր արա-
մագրութեան տակ զրած էր Միւրի պէյ:

Երկտասարկ Ֆուսա պէյը, ազդեցիկ,
վայելուց սպայ մըն էր: Գաղղիերէնը այն-
քան լաւ չէր կրնար բացատրել, երկու
պարբերութեան մէջ տեղ անպատճառ «Էր-
սէլան» (խեմութիւն) բար պիտի գործա-
ծէր ինձ ուղղելու:

Քիչ յուզմունքով չէ որ կը մտնէ այդ
նշանաւոր պալատը որ այսօր Միւրի վե-
րածուած է, որուն համար հարստութեան
անհասնում գանձ մընէ, կըսէ առաւելուր,
հագար ու մեկ գիշերներուն մէջ:

Պարսո կըսած ամեն շատ անգամ ըսած
էի թէ՛ Փատիշահը եթէ բան մըն ալ չի
գտնայ, թոփ-Գարու սերայի գերագոյն
գահարները կընտրէ ու նուէր կը զրկէ Ե-
րուսաղեմի թագաւորներուն: Ամեն անգամ որ
թիւրքի մը կը հանդիպէ կը յիշեցնէր Պետա-
բարդին մէկ խօսքը թէ՛ «զրամը պատե-
րագին ջիղն է. ցորչափ թուրքիոյ գանձը
հեծէ պարբեր տակ խեղդուած, մի յուսար
որ թուրքիա պիտի կրնայ զեմ գնել Երու-
սաղեմ»

Բայց «Գուր չ'այցելեցիր միւս թոփ-
Գարու սերայի գանձ, պատասխանեց զի-
մացինս. բաւական է որ Սուլթանը այդ
գանձին մէջ գտնուած գահարներուն էն չը
հանուածներէն մէկ երկու հատը ծախէ,
միլիոններուն խօսքը չըլլար կը շահի»:

Մեր այցելած միւրի (թանգարան)երկը
սենեակներէ կը բաղկանայ: Հարիւր յազ-
մական պատերազմներու մէջ ստացուած
աւարները ու գանձերը՝ ցուցադրուած այդ
սենեակներուն մէջ, կենդանի ապացոյցն
են Օսմանցիներու փայլուն անցեալին:

Առաջին սենեակը կը պարունակէ, Պար-
սի խամայիլ Շահին գահը, գիւր բռնուած
1314ին Սուլթան Սելիմ Ա. էն: Արեւելեան
գրութեամբ ծանգուրները պարսաղեմի կարե-
նալ նստելու չափ լայն թիկնաթոն մըն է
բարձով, առաջը մէկ խնկիլիլ կրուած:
Ասոնց ամենքն ալ մարգարիտներով, զրու-
րոյտներով զարդարուած: Շահ խամայիլ
գահը Գանձուն էն թանկագին հնութիւնն է:

Ասիկ վերը կուգայ Սուլթան Մուրաա Ա. ի
օրորոցը, արեւելեան ոճով բոլոր շէնքը ոսկիէ՛
զրան ազամաններով ճոխացած. յետոյ

երկու նորինչի չափ բնորոշ և գործառույններ. հետզհետե աչքի կը զարնեն(սամ) քիկ. բխար շրջափակ, թանկագին բարերով: Ընդհանրապես պատմաճանաչող, ծածկոցներ. մարգարտաշար: Կրկին աշխարհագրաբան հոգևահարներ: Ոսկեայլ տնօթ մը Մարգարէին մտորքին թեկերը պահպանելու համար:

Շրջադուր շրջադուրներ արքայի ցուպեր: Յանձնապահայ տնօթներ, Չինաստանի գործ: Ժամանակներ, սուրբ, սագրինը խաղալու բարեր: Ապախ-Ազիզի ձեռքանը բնական մեծութեամբ: Ոսկեկնարկիչէնէ: Ոսկե և Արծաթէ թուրք և օտար գրաքներ: Մուրաբ Գ.ի վահանը և զենքերը: Մանր հրացաններ: Այն գահը զոր կը գործածէր Մովսէս Մէհմեդ Բ. նախարարաց խորհրդոց նախագահած միջոցին:

Յանձնապահ մեծ սուր մը, զոր մեր Չերքէզ առաջնորդին խօսքին նայելով, Մովսէս Մէհմեդ խոսք կը խոսէր Եղիպտական Մովսէսի մը ձեռքին «Ուզարի» կոչումով:

Առնչով զատ շատ մը հետաքրքրական և չքնաղ անարկաններ խոսքն ի խոսքն դարձնենք. մէջ շարուած են:

Խորհրդանշան դարանի բով, մէջ մէկ զօրք կայնած է արձանի պէս, լուս ու մունջ:

ՏՕՔԹ. ՆԵՎՐՈՒԶ

Իր բնակութիւնը փոխադրած է Եւրասի-Մանասի, նորաշէն Պանք Օթոմանի գէմի կարգը Մէհմեդ Հէլլէր, թիւ 28 առաջին յարկ:

Հիւանդ կընդունի բաւ առաջնոյն առ. ժամը 8 էն 9. կէս օրէն վերջ Ժ. 3 էն 5:

ՃԱՄԱԳՈՐԾ ԲԱՅԱՆԱՅ ԱՐ

Ասկէջ երկու ամիս առաջ ուրախութեամբ () ծանուցուեցաւ «Նոր-Օր»-ի մէջ թէ Տէր Գարբիէլ քահանայ Չինծիրճեան յիմնելով Լուսաւորչական եկեղեցին, կը յարէր Բուրբահանութեան:

Ընթերցողներուն անձանօթ բան մ'ըլլալու չէ անշուշտ, թէ այսօր որքան թիչ է թիւը անոնց՝ որոնք, հաստատ համոզմամբ, այս կամ այն դաւանութեան վրայ երկար և խորագնին սուղամասերութիւններ ընելէ յետոյ միայն՝ կրօնափոխութիւն մը յանձն կառնուն. մինչ անդին՝ լէզոն կը կազմեն անոնք — ինչպէս այսօր Հայաստանի մէջ — որ սգիտութեամբ, շահախնդրութեամբ և կամ ո՛ր և է բանէ մը դժգոհ, անհաւատարմօրէն կը շեղին սերունդէ սերունդ իրենց փոխանցուած աւանդութիւններէն ու կերթան ուրիշ տեղ փնտռելու արքայութեան եթէ ոչ... հասցի ճամբան:

Տարակոյս չունիք թէ երբեմն երանաշնորհ Տէր Չինծիրճեան քահանայ դժգոհներու դասէն եղած չըլլայ. չենք միայն գիտեր թէ՛ այդ երանելի վեղարաւորը ցարդ գործազրած է իր երկնազդեցիկ նպատակը, որ տեսակ մը նարագործնործան թմբուկով կառնուէր ի լուր ամենայն

հաստատեցաւ հայոց, և թէ դ՛ր մի յարանուանութեան փարած է հիմա:

Չարմանալին հոն է միայն, որ երէկուան այդ ստատածաշնորհ քահանան և թերևս այսօրուան Լուսաւորչականութեան մէկ քարազիչ պատուելին, այլև քահանազօրիկ ըլլալով հանդերձ, յամուարար կը շարունակէ իր վրայ կրել հոյ կղերի սեւ սքեմը:

Անշուշտ այս պարագան՝ որքան ալ անախորժ չհետաքրքրէր մեզ այնչափ, եթէ Տէր Չինծիրճեան այդչափով զոհանար. բայց գայթակղալի բան տեսնել մէկմը, որ վեղարկը կրէ, խափշու մ'ալ զուլուր, ու Գահիրէի Տիլի-ի-Տէս փողոցի մը մէջ ժամագործութեամբ և... կղերի, սեւ ակնոցը մէկ աչքը:

Անարգանք մ'է, պիղծ վրէժխնդրութեան մը նողկալի ցուցումը չըսելու համար, զոր գիտակցօրէն կընէ Չինծիրճեան քահանայ ամբողջ հայութեան, ամբողջ կղերական դասուն:

Բայց եթէ Չինծիրճեան չզգար իր անպատշաճ արարքի ծանրութիւնը, ինչպէ՞ս Սրբազան առաջնորդը չէ հետաքրքրուած այդ քահանայով, ինչպէ՞ս կը հարցնենք, Ազգ. Պատ. վարչութիւնը, ինք որ աշխարհ նորօրէն հարուստին ու ազգապիս արժանապատուութիւնը իրարմէ զանազանել ու յարգել զիցացած է Մարմինայի գերեզմանատան մէջ տերահաշտակ պատ մը կանգնել տալով, ինչպէ՞ս այսօր կը թերանայ Հայ եկեղեցոյ և կղերականութեան արժանապատուութիւնը պաշտպանելու գործին մէջ, մինչդեռ առջին, զեռ անցեալ օր իսկ, ընկերական շրջանակի մը մէջ սաք բանակուի մ'էր որ տեղի կանենար այդ քահանային և իր հազուադէ շուրջը:

Միթէ մեզ նման մանաւորներ պէ՞տք է որ աւելի նախանձախնդիր ըլլան ազգային արժանապատուութեան բան Ս. Առաջնորդը, և զինքը չըջապատող պաշտօնական մարմինը:

Առաջնորդարանի պարտականութիւնն է անյապաղ առաջը առնել այսպիսի արարքի մը, որուն հետեւանքը կրնայ աւելի գայթակղական դառնալ:

Առանց կղերական տարազի՝ Չինծիրճեան ազատ է ըլլալ Բողոքական կամ Լուսաւորչական, և ըստ հաճոյս ընել ինչ որ կուզէ:

Ս. Օ.

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼԻՍ. — Ռուսական դեպուանատունը մեծ ջանք ի գործ դրաւ որ Յովակիմ Գ. վերահաստատուի Պատրիարքական Աթոռայն վրայ Սակայն կը կարծուի թէ Բարձրագոյն Դուռը նոր Պատրիարքի ընտրութեան ժամանակ Յովակիմ Գ. նունը պիտի չնչէ գանդիտաներուն (ընտրելիներուն) մէջէն:

Կ. ՊՈԼԻՍ. — Միջազգային թղթատունը ջնջելու համար մեծ ճիգ կը թափէ Սուլթանը Այս առթիւ աչմուկ կը տրէ զիւստապիտական շըրջանակներուն մէջ:

Կ. ՊՈԼԻՍ. — Բաղմաթիւ Ժէօնթուքը ձեռքաւարուած են, Պուլիար յեղափոխականներու գործակից եղած ըլլալու ամբաստանութեամբ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Գահիրէի անգղիական հիւպատատարանի կողմէն հրատարակուած մարգահամարի մը ցուցակին համեմատ Գահիրէ բնակող անգղիական հիպատոկներուն թիւը 3,500 էր հասնի: 1,432 անգղիացի, 1,844 մայթէզ, 409 չընգիկ և 775 ուրիշ տղերէ:

— Ռէժիի ծխախոտի ընկերութեան արտածութեան ընդհանուր գործակատար Պ. Ժողովիական Գահիրէ հասած է, որ մտաւարտուէն պիտի բանայ խանութ մը Օսմանեան նորաշէն պանթայի կից՝ ուէժիի ծխախոտի փաճառան համար:

— Ֆրանսիացի Գոյրբաւ որբանոցներու ի նպատակ Օրէրայի թաղանին մէջ տրուած ներկայացումէն 14,982 ֆրանքի զատ հասցի մը գոյոցած է:

— Գահիրէի ֆրանսական դաղթականութիւնը հիմնականէ մեծ պատաստութիւն կը տեսնէ փաստաբան կերպով տօնելու համար ինչպէս ամէն տարի, Էլզեթիլի պարտէզին մէջ: Յուլիս 14-ի աղջիկն տօնը:

— Պարսից Վեհ. Շահին եղբորդին Բարձր. իշխան Մահմեդ Հիւսէյին Միրզա ֆիլիման փարման, որ Մէքքէ խոտի գնացած է, Գահիրէ հասած է:

Ն. Բ. Իշխանը պարսկական զորաբանակին ընդհանուր հրամանատարն է: Պարսկաստան չի վերադարձած՝ չորս ամիս ևս Լիւանան պիտի անցունէ:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կ. Պուրայ խոսքն ժողովը իր անցեալ շաբթուան նստին մէջ, նկատողութեան առաւ Պապատի առաջնորդական խնդիրը, և հանդոյցից Տ. Արիստակէս եպիսկոպոսի տեղ յարմար պատեց այդ պաշտօնը յանձնել Տ. Յակոբ Աշտ եպիսկոպոսի՝ Պատր. փոխտրատուով նորոզ և որչեց այս մասին թէ՛ Պաղատուի Իսղաքներուն և թէ Տ. Յակոբ Աշտ եպիսկոպոսի հաւանութիւնն առնել կա՛խաւ, ըստ այնմ վերջնական կարգադրութեանց ձեռնարկելու համար:

— Բանտէր Պ. Կ. Պատմական անգամ ընտրուել է Բարիդի Ասիական ընկերութեան, որ բանասիրական ու գիտական մարմին մըն է:

— Բարեբեքէն կը գրեն թէ անգղիական իրաւագետը 30 սակիի գողութեան մը զոհ գացեր է: Նամակագիրը կառնելէ թէ վարդապետին շուրջի մալուցի վրայ կը կատկածուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՈՒԼՔԱՆԻ ՆՈՐ ԵՄՐՈՒՄԸ
Կ. Պուլէ «Տէլի-Նիւսթի» ուղղուած հեռագիր մը կրէ. Ապախ Համիա իրը Բաղմաթիւն այնպիսի պետը իր գիրքը ամրացնելու համար Մահմեդական պիտուութիւն մը յուսով բերելու կը ստորագրուի: Թուրք կառավարութեան քաջազորութեամբ

Եւրոպայի, Ասիայ ու Աֆրիկէի զանազան Իսլամ հասարակութեանց կողմէն խտաբնացութիւն մը կը կազմակերպուի Պուլիս պալատ նորաստեղծ Ռիսաստանները պիտի սղուեն Ապախ Համիա իրը յաշարը Մահմեդական:

Ռիստագնացութեան այս շարժման հետ միասին Մահմեդական հաւատքը տարածելու մեծ եռանդ մ'ալ արթնցած է: Սուրով չարտի փորձեն այլ ևս Մահմեդականութիւնը տարածել, այլ քրիստոնէից օրինակին հետեւելով՝ միսիոնարներով, սրբ պիտի խրկուին Արեւելքի ամէն կողմերը: Կր յայտարարուի գործնական թէ՛ Բրիտանեայ Պետութեանց գէմ փոխադարձ պաշտպանութեան համար գաշտակցութիւն մը պիտի կազմուի Թուրքիոյ, Պարսկաստանի և Աֆրիկայի տարածքներէ:

ՍՈՒԼՔԱՆ ՄՈՒՐԱՏ

Վերջերս եղբարք Թաղաւորի համակրութիւնը Արիստակէս Մարտի վրայ գործնելու համար եղած ջանքեր քանի մը շահեկան իրադարձութիւններ կը իշխեն մեզ՝ հանրապետական անտառութեան այսքան տարիներ ծածկուած այդ դժբաղդ Վեհապետին վրայ Օսմ. Վեհապետաց երեսուն և երրորդն է Մարտահինգէլարդ, որ 1876 Մայիսին յաջորդեց Ապախ Ազիզի: Յաջորդ Յալիսին իր եղբայրը, Ապախ Համիա, ինրա հակա կարգուեցաւ. Իրեն, և Օգոստոս Յիւսէյնից եղաւ ինք: Թերևս այնպէս չարտի գիտնայ ընու թէ ինչ մեքենայութիւններով այս փոխութիւնը կատարուեցաւ, թէ և երևութապէս յախարարական խորհուրդն էր որ օրինաւորապէս կատարեց զայն: Բնուած է յանտար թէ շատ աւելի առողջ միտք մ'ունի քան իր եղբայրը, և թէ անոր փախուստի կարելիութիւնը զիստար տարապիսեբէն մին է Համիայ: Ամենէն անգամ թանտարդելութեան գառապարտուած է Մարտալը իր բանտապահները միայն արտօնուած են տեսնել զինքը, և ամէն զգուշութիւն ձեռք կառնուի իրմէ կատարեալապէս զաղտնի պահելու այնպիսի մէջ՝ անցած դարձածները:

Իբր երեք տարի առաջ տարաձայնութիւն մ'ըլլաւ թէ Մարտա փախած էր բանակէն, այս տարաձայնութեան անմիջապէս յետոյ Չարգանի պալատին մէջի բանակէն Երազղի գետունին վրայ բարձր պարիսպով մը շըրջապատուած Մայթա Քէօշկը փոխտգրուեցաւ: Իգործ դրուած խիստ հրակողութեան հակառակ քանի մը օտարազգիներ տեսն Մարտաը փոխազրութեան միջոցին, սրտեց յայտարարութեամբ իր ձեռացած ու մոչած երկուցիկն տակ վեհ կերպարան մ'ունէր Մարտա և մտային հիւանդութեան ամենագոյն նշան միակ չէր ցոյց տար:

ՁԻՄԻՌՆԻԱՆ ԿՐ ԳՐԵՆ
Հոս յայնքուն ու հրեաներուն միջև ձեռնարկուած կը շարունակուին:

Յոյները կ'ամբաստանեն տեղոցի հրեաները թէ հրեական գառիկին առթիւ յոյն երիտասարդ մը գողցած են որուն արնակով բոլոր հրեաները պիտի հազարգուին: (Այս նախապաշարուած թուրքիոյ բոլոր քրիստոնեաներուն մէջ կը տիրէ): Հինգ օրէ ի

վերջնային զեպր անօրինակ զրգու- թնան մը մասնամ էր յոյն ամբարը:

Յոյն ամբարը ամէն օր կը խը- նուէր անոնցարարանին առջեւ և կը պահանջէր որ կորուսած յոյն տղան գտնուի:

Քանի մը շարքով վերջն էր որ՝ կորուստը տղուն գազանիքը լուծ- ուեցաւ: Իզմիրէն քանի մը ժամ հե- ոու Ռուր կզգիին մէջ:

«Հակառակ պարագային ուրիշ մի- ջոցներու պիտի գիտնէր» կ'ըսէին: Հազիւ ստաջնորդը կուսակալին գա- յած էր, քանի մը չափուցներ հե ի հե չուկային մէջ կը վազվուէին հը- բամայելով որ խանութները փակուին:

Ֆրանսան, Պուլրիա, Պարսկա- սան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպ- տոս, Յունաստան, Աւստրիա, 8 ֆրնք:

Ամերիկա 1 գոլար (սակի) Բամախորագրոթիս 1902 քուս- կանի (12 գ/ր)

Ռուսաստան 10 ուրլի Անգղիա 1 ֆնտ, ստերլին Ֆրանսա, Ռուլարիա, Պարսկա- սան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպ- տոս, Յունաստան, Աւստրիա, 23 ֆրն:

Բամախորագրոթիս 1901 և 1902 քուսկանիէրի հաւուր (13 գ/ր)

Ռուսիա 12 ուրլի Անգղիա 1 ֆնտ, ստերլ. և 7ը շիլ: Ֆրանսա, Ռուլարիա, Պարսկա- սան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպ- տոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրնք:

Ամերիկա 6 գոլար Ամենայն տեղերից զիմել հետեւալ հասցեով:

Paris, (France) 64 rue Claude- Bernard Directeur de la Revue « Jamanak » S. Hakhoumian

Ա. Զ. Դ

Շատերու կծուէ յայտնուած փա- վորի մը գոհացում տարա և մեր ընթերցողներու զիրար թիւն մը ըն- ծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հասով պիտի ծախուի Շա- րա Ապա-էլ-Ապիդի սկիզբը Պ. ԿԱՐԱ- ՊԵՏ ԵՐԶԵՎԱՆՆԻ խանութը:

ՏՈՒՍ ՄԻԶԻԼՍԱՆ (ԻՍՒԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՍԿԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն հրատարակութեան առաջին մասը՝ Եգիպտական արգարութեան Գործոց Նախարարութեան կողմէն ներթափան վարձատրութեամբ գնա-

հատուած և Եգիպտոսի գաղափարներու մէջ զործածութիւնը պաշտօ- նապէս ընդունուած է:

ԲՈՎԱՆԳԻՍՏԻՍՏԻՒՆ

Բողջ. տեսութիւն ժառանգական օրինաց և ժառանգութեան իրաւոց ծագման վրայ. — ժառանգութեան պայմանները. — Ազգականութիւն և աստիճանները. — Գրութիւն և ժա- ղանգութեան հետ ունեցած կապերը. — ժառանգութեան զրկող պատճառներ. — Մարգասպաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարգու արեան զինը). — ժառանգութեան մը պարագը և պա- հանջը. — ժառանգորդներու կարգը իրենց աստիճաններով:

ժառանգութեան օրէնքին սրամա- զրութիւնները ուրոյն ուրոյն մեկնը- ւած են: Գրքոյկին վերջը զրուած է ցանկ մը որ մասշնի կ'ըստակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինա- կան բաժինները ինչպէս կը բաժնը- լին:

Երկրորդ մասը մօտ ժամանակէ ըստ պիտի տեսնէ խնամակալութեան կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով: Գին, 10 ԳԱՀ. ՈՂ,Զ

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԾԱՎԱՍ ԵՎԻՊՏՈՒՄ

Մ. ՍՍՍՍՅԵԱՆ

Լիանի հանրամասն զգամատներ, այս անգամ՝ ունեցաւ իւր Եգիպտոսի զործակալն ալ, Տ. Մ. Կրտսի Սոսոյեան, որ իւր հրատարակային ցոյց տուած պարկեշտ զործանելութեամբն ամե- նուս վտահոթութիւնը կը վարելէ:

Սոյն զործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիանի քաղա- քապետութիւնէն պաշտօնապէս վա- ւերացուած փոխանորդագրի համա- ձայն, պիտի կատարէ Պանդ Լիանէզի միջոցաւ ամեն տեսակ զրամական և

Քուէտի Ֆոնսիլէի, վիլ տը Բարիի և Գազիական ամէն արժեթուղիներու զործողութիւններ, գանձումներ: Սմա- կան չնչին դուստրի մը խնայողաւ թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա- հանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին զիմել նիւ- պառի վրայ փաստաբան Ռարթուրի զրատենակը:

Թղթակցութիւն և կամ գրամ վրը- կել հետեւալ հասցէին:

Մ. ՍՍՍՍՅԵԱՆ Ի ԳԱՀԻԼԷ

ՊԵԼԱՄԱՆՈՒՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ:

ԱՍԵՐԻԿԱՆ ԴԵՐԱԿԱՆԵՐ ԱՐԱՆՆ ԵՒ ՏԻԿԱՆՆ ԵՒ ԶԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑ

Ապսիթի մեծ պոլոսային վրայ Տայիտլի Սանիլիի զիմացը, Եսպիլիէ երկրապահ գործիներու վանտոնուրը:

Վերջերս Ամերիկայէն հօս և կամ հաստատուած ըլլալով կը յայտարար- աներ սպից շատարակութեան թիւ պատրաստ ենք գոհացնել մեզ զիմեզ Պատ. լրագրողները, գործի մար- րութեան, զիններու, չափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն:

Մեր զործատուը այն մէջ կ'ուսնու- զուին նոտե ձեւադատութեան դասեր ամերիկեան ամենալիւրջին կատարե- լագործուած մէթոտով:

Մանրամանկութեանց համար զիմել մեր զործատուին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միուրիւն».— Թ. Ս. Փափազեանի

ՏՊԱՐԱՆ Ի ԳԱՀԻԼԷ ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ԶԻՇԴ ԴԻՄԱՑ ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ Սոյն նորակազմ ապրանքին մէջ կը ապուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա- րակութիւններ, պարբերական թերթեր, յարաբարութիւններ, շրջաբերականներ, այցեւորման, մահազգեր, հարաննաց հրատարակներ, կանոնադրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն: Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և ճաշակաւոր սպազրութեամբ: ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ